Արձանագրություն N 2

Գլոբալ հիմնադրամի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2025 թվականի կարիքների համար էլեկտրոնային աճուրդով ռենտգեն սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՀՇՀԽ-2025/11 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «21» «նոյեմբերի» 2024թ.
ժամը 12:00

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի **երեք** անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ինեսսա Ասմանգուլյանը, իսկ քարտուղարն էր՝ Լիլիա Չախոյանը:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Ի. Ասմանգուլյան
Հանձնաժողովի անդամներ	Հ. Խուրշուդյան, Ա. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար	Լ. Չախոյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

Ընդունել ի գիտություն, որ 2024 թվականի նոյեմբերի 08-ին հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2024 թվականի նոյեմբերի 18-ին ժամը 16:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը 2024 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 16:00-ին: 2024 թվականի նոյեմբերի 21-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի նիստ՝ մասնակիցների կողմից հայտերը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1.	ԱՁ Հովիկ Կարապետյան	*karapetyanhovik@proton.me*	*123456789*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

Առաջին տեղ զբաղեցրած ԱՁ Հովիկ Կարապետյան-ի հայտում բացակայում է հրավերով պահանջված փաստաթղթերը և առաջարկված վերջնական գինը գերազանցում է մրցույթով նախատեսված նախահաշվային գինը: ԱՁ Հովիկ Կարապետյան-ի կողմից ներկայացված հայտը գնահատվում է անբավարար և ենթակա է մերժման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՀԾՀԽ-2025/11» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-ԳՀԾՀԽ-2025/11» ծածկագրով գնման ընթացակարգի համար սահմանել անգործության ժամկետ սահմանել 10 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 , դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ

Ինեսսա Ասմանգուլյան _____

անդամներ՝

Հայկ Խուրշուդյան _____

Արթուր Գևորգյան _____

քարտուղար՝

Լիլիա Չախոյան _____